ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն
Արսեն Դավթյան

2. Զբաղեցրած պաշտոնը
Առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները
Հարավային Կորեա, Սեուլ, 2018 թվականի նոյեմբերի 5-9

4. Հրավիրող կողմը
Ասիական Զարգացման Բանկ և Կորեայի առողջապահական ինդուստրիայի զարգացման ինստիտուտ

5. Գործուղման նպատակը
Մասնակցություն «Կայուն առողջապահական համակարգերի համար թվային տեխնոլոգիաներ» խորագրով աշխատաժողովին

6. Քննարկված թեմաները
Գործուղման ընթացքում հնարավորություն ստեղծվեց ծանոթանալու համապարփակ առողջապահական ծածկույթին հասնելու կորեական առաջավոր փորձին, ինչպես նաև ուսումնասիրելու առողջապահության բնագավառի «հանրային առոջապահական ծառայություններ», «առողջապահության մասնագետների կրթություն», «ազգային առողջապահական տեղեկատվական համակարգ» ոլորտներում թվային տեխնոլոգիաների հեռանկարները: Քննարկվեց թվային տեխնոլոգիաների ներդրման ազդեցությունը վերը նշված ձեռքբերումների վրա:
Աշխատաժողովի ընթացքում ներկայացվեցին առողջապահության ոլորտի զարգացման հիմնական մարտահրավերները և հնարավորությունները, դրանց հասցեագրված ռազմավարությունները՝ ասիական և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում:
Մասնավորապես՝ առաջին օրվա ընթացքում հանրային առողջապահության տեսանկյունից դիտարկվեց համապարփակ առողջապահական ծածկույթի ֆինանսավորումը, թվային տեխնոլոգիաների ներդրումը հանրային առողջապահության ոլորտում, ներառյալ էլեկտրոնային առողջապահությունը և հեռահար բժշկությունը, դրանց ներդրման առավելությունները: Կազմակերպվեց այցելություն Սօնգփա-գու հանրային առողջապահության կենտրոն:
Ներկայացվեցին հիվանդանոցային օղակի նախագծման, կառուցման և կառավարման հարցեր, վերջինիս բարելավման նպատակով թվային

տեխնոլոգիաների, ինչպես նաև շարժական հիվանդանոցների տարբերակները և կիրառման հնարավորությունները:
Աշխատաժողովի ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել բժշկական կրթության, լիցենզավորման հարցերին, որոնք քննարկվեցին նաև Յոնսեի Սեվերանս հիվանդանոց և բժշկական քոլեջ այցելության ժամանակ:
Աշխատաժողովի երրորդ օրվա ընթացքում քննարկվեցին ազգային առողջապահական տեղեկատվական համակարգին առնչվող թեմաներ, ներառյալ Կորեայի ազգային առողջապահական ապահովագրական համակարգը, ինչպես նաև ապահովագրական համակարգի վերանայման և գնահատման համակարգը:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Աշխատաժողովին հրավիրված էին մասնակցելու շուրջ 30 երկրների կառավարություններից ներկայացուցիչներ, ասիական մի շարք զարգացած երկրների առողջապահության կազմակերպիչներ:
Որոշ երկրների, այդ թվում նաև Հայաստանի ներկայացուցչության կողմից ներկայացվել է երկրի առողջապահական համակարգի զարգացումը, ընթացիկ խնդիրները և տեսլականը՝ Ասիական զարգացման բանկի հետ համագործակցության ենթատեքստում:
Կազմակերպվել են այցելություններ կորեական առաջատար բժշկական կենտրոններ և առողջապահական հիմնարկներ, ինչպես նաև մտքերի փոխանակման նպատակով՝ ինտերակտիվ նիստեր:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հայաստանյան ներկայացուցչությունը պաշտոնական հանդիպում է ունեցել նաև Կորեայի Հանրապետության առողջապահության նախարարության ներկայացուցիչների հետ՝ առողջապահության նախարարի տեղակալ պարոն Քանգ Դոտաեի գլխավորությամբ: Հանդիպման ընթացքում ձեռք են բերվել առողջապահության ոլորտի ամենատարբեր բնագավառներում համագործակցության գործնական պայմանավորվածություններ:

9. Առաջարկությունները

Կորեական LGCNS-ի հետ քննարկվել է պետություն-մասնավոր հատված համագործակցության ֆորմատով Հայաստանում հեռահար բժշկության զարգացումը, ներառյալ խելացի բժշկի և առցանց հետազոտությունների մշտադիտարկման իրականացումը:
Դիտարկվել են կորեական առաջատար բժշկական կազմակերպությունների կողմից Հայաստանի առողջապահության ոլորտում ներդրումների իրականացման և

առողջապահական կազմակերպությունների միջև փորձի փոխանակման հնարավորությունները:
Առաջարկվել է նաև Կորեայի առողջապահության նախարարության և Յոնսեի Սեվերանս հիվանդանոցի ու բժշկական քոլեջի հետ համատեղ հայաստանյան մասնագետներին ընդգրկել կարճաժամկետ կրթական ծրագրերում:

10. Գործուղվողները

Արսեն Դավթյան – Առողջապահության նախարարի տեղակալ
Հայկ Սայադյան – Առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» Պետական հիմնարկի տնօրենի պաշտոնակատար

11. Ստորագրությունը, ամսաթիվը

13.11.2018 թ.